

Հայտարարություն լրագրող Թաթուլ Հակոբյանի դեմ իրականացված արշավի կապակցությամբ

9 դեկտեմբերի, 2021թ., Երևան

Աշխատանքային ուղևորությամբ ԱՄՆ-ում գտնվող լրագրող Թաթուլ Հակոբյանը դեկտեմբերի 8-ին ահազանգել է, որ իր հասցեին սպառնալիքների, հաշվեհարդարի, անգամ՝ կյանքից զրկելու կոչեր են հնչել: Ըստ նրա՝ այդ արշավն ուղղորդվում է Հայաստանից և ԱՄՆ հայկական որոշ շրջանակներից, իսկ սպառնալիքների առիթը, ըստ լրագրողի, վերջերս հրապարակայնորեն արտահայտած իր հետևյալ միտքն է. «Հայաստանն այնտեղ է, որտեղ կանգնած է հայ զինվորը»:

Այս փաստի վրա լրագրողը հատկապես հրավիրել է իրավապահ մարմինների, լրագրողական կազմակերպությունների, Մարդու իրավունքների պաշտպանի, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան ուշադրությունը: Նա խոստացել է Հայաստան վերադառնալուն պես իր դեմ արշավի վերաբերյալ անուններ և փաստեր ներկայացնել: Այս պահին լրագրողը գտնվում է ԱՄՆ ոստիկանության ուժերի պաշտպանության ներքո:

Տեղի ունեցածը ևս մեկ անգամ վկայում է, որ թե՛ քաղաքական շրջանակներում, թե՛ հայ հասարակության մեջ չի ձևավորվել քաղաքակիրթ բանավեճի մշակույթ, իսկ Արցախյան 44-օրյա պատերազմից հետո ծայրաստիճան սրված անհանդուրժողականությունը այլակարծության նկատմամբ խորանում է:

Անկախ նրանից՝ որևէ մեկին դուր են գալիս Թաթուլ Հակոբյանի մտքերն ու վերլուծությունները, թե ոչ, նա հայ լրագրության լավագույն ներկայացուցիչներից մեկն է, որը խորապես ուսումնասիրել է Արցախյան խնդիրը և խիզախորեն լուսաբանել է այն, այդ թվում՝ ռազմական գործողությունների առաջնագծից: Որպես լրագրող, վերլուծաբան և քաղաքացի՝ նա իրավունք ունի ազատորեն կարծիք արտահայտել, և դրա համար իր և առհասարակ ցանկացած անձի հասցեին սպառնալիքներ ու կյանքից զրկելու կոչեր ուղղելը քրեորեն պատժելի արարք է:

Մենք՝ ներքոստորագրյալ կազմակերպություններս, խստորեն դատապարտում ենք Թաթուլ Հակոբյանի նկատմամբ իրականացվող անթույլատրելի արշավը և գորակցություն ենք հայտնում մեր գործընկերոջը:

Տեղի ունեցածի առնչությամբ պահանջում ենք.

- ՀՀ դատախազությունից՝ անհապաղ միջոցառումներ ձեռնարկել այս սպառնալիքների արշավն իրականացնողներին ու նրանց ուղղորդողներին

բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու համար, մանավանդ, որ լրագրողը պատրաստ է տալ կոնկրետ անուններ,

- Ոստիկանությունից՝ Հայաստան ժամանելուն պես ապահովել թաթուլ Հակոբյանի անվտանգությունը:

Կոչ ենք անում լրագրողական հանրությանը՝ համերաշխություն ցուցաբերել և սատարել թաթուլ Հակոբյանին՝ դիմակայելու իր նկատմամբ ձեռնարկված դատապարտելի գործողություններին:

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ՄԵԴԻԱ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ԱՄՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ – ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԿ

ԳՈՐԻՄԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

«ՖԵՄԻՂԱ» ՀԿ